## ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/01

«09» մարտի 2021 թ.

գ. Լոռի Բերդ

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՔՎԷ Նախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Էդվարդ Քոչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2/երկու/ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **6.355.000 (վեց միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար)** ՀՀ դրամ, ընդ որում՝ 1-5 չափաբաժինների աշխատանքների համար **2.105.000 (երկու միլիոն հարյուր հինգ հազար)** դրամը վճարողի հաշվին է փոխանցվելու **900252000105** գանձապետական հաշվից, իսկ 6-րդ չափաբաժնի աշխատանքների համար **510.000 (հինգ հարյուր տասը հազար)** դրամը՝ **900252114302** գանձապետական հաշվից, 7-11 չափաբաժինների աշխատանքների համար **2.645.000 (երկու միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար)** դրամը՝ **900252000931** գանձապետական հաշվից և 12-13 չափաբաժինների աշխատանքների համար **1.095.000 (մեկ միլիոն իննսունհինգ հազար)** դրամը՝ **900252114153** գանձապետական հաշվից:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 5 /հինգ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| **Լոռի Բերդի համայնքապետարան** | **ՔՎԷ Նախագիծ» ՍՊԸ** |
| **Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5** | **ք.Վանաձոր, Վարդանանց 17-5** |
| ՀՎՀՀ 06954163 | **ՀՎՀՀ 06933586** |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | **<<Ինեկոբանկ>> ՓԲԸ** |
| ՀՀ 900252000105 | **ՀՀ 2051422103891001** |
| ՀՀ 900252114302 | **Է. Քոչարյան** |
| ՀՀ 900252000931 | ------------------------------------------ |
| ՀՀ 900252114153 | (ստորագրություն) |
| Ա. Ներսիսյան | |
| ------------------------------ | |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«09» 03 2021 թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71241200/1 | **Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգման, ամրացման, տարածքի բարեկարգման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (ավարտական փուլ)**<br><br>*Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.*<br><br>*Պատերի ամրացում - 150 մ²*<br>*- Առաստաղի գաջի սվաղի նորոգում - 50 մ²*<br>*- Շեպերի սվաղում գաջի շաղախով - 10 մ²*<br>*- Պատերի գաջի սվաղի նորոգում - 50 մ²*<br>*- Պատերի սվաղում ց/ավազային շաղախով - 50 մ²*<br>*- Շեպերի յուղաներկում - 10 մ²*<br>*- Պատերի ներկում լապեքսով - 150 մ²*<br>*- Առաստաղի ներկում լապեքսով - 50 մ²*<br>*- Տարածքի բարեկարգում- 2000 մ 2* | դրամ | 530000 | 530000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 2 | 71241200/2 | **Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի համայնքային կենտրոնի մարզադահլիճի վերանորոգման, հանդիսությունների սրահի հատակի սալիկապատման, տարածքի բարեկարգման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (ավարտական փուլ)**<br><br>*Իրականացվելու են հետևյալ* | դրամ | 530000 | 530000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *շինարարական աշխատանքները.*<br><br>*Համայնքային կենտրոնի մարզադահլիճի վերանորոգում - 1000 մ²*<br>*Հանդիսությունների սրահի հատակի սալիկապատում -360մ²*<br>*Տարածքի բարեկարգում - 2000 մ²* | | | | | | |
| 3 | 71241200/3 | **Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի համայնքային կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ**<br>*Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.*<br>*Տանիքի ծածկի փոխարինում - 250 մ²*<br>*- Առաստաղի գաջի սվաղի նորոգում - 50 մ²*<br>*- Շեպերի սվաղում գաջի շաղախով - 10 մ²*<br>*- Պատերի գաջի սվաղի նորոգում - 50 մ²*<br>*- Պատերի սվաղում ց/ավազային շաղախով - 50 մ²*<br>*- Շեպերի յուղաներկում-10 մ²*<br>*- Պատերի ներկում լատեքսով - 150 մ²*<br>*- Առաստաղիի ներկում լատեքսով - 50 մ²*<br>*- Դռների և լուսամուտների փոխարինում - 40 մ²*<br>*- Լամինատե հատակի կառուցում - 40 մ²* | դր ամ | 355000 | 355000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 4 | 71241200/4 | **Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ**<br>*Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.*<br>*- Առաստաղի գաջի սվաղի նորոգում - 50 մ²*<br>*- Շեպերի սվաղում գաջի շաղախով - 10 մ²*<br>*- Պատերի գաջի սվաղի նորոգում - 50 մ²*<br>*- Պատերի սվաղում ց/ավազային շաղախով - 50 մ²*<br>*- Շեպերի յուղաներկում - 10 մ²*<br>*- Պատերի ներկում լատեքսով - 650 մ²*<br>*- Առաստաղիի ներկում լատեքսով - 350 մ²*<br>*- Լամինատե հատակների իրականացում - 60* | դր ամ | 355000 | 355000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 5 | 71241200/5 | **Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի կենտրոնների բարեկարգման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ** | դր ամ | 335000 | 335000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.<br><br>-Համայնքի ութ բնակավայրերի կենտրոնների բարեկարգում<br>- բնակավայրերի համայնքային կենտրոնների, պուրակների ցանկապատերի վերանորոգում մոտ 750 գծմ<br>- համայնքային կենտրոնների, պուրակների, կանգառների տարածքների բարոկարգում՝ մոտ 15000 ք.մ. և ութ բնակավայրերի կենտրոններում կտեղադրել թվով 25 նստարանների տեղադրում (նստարանները կառուցված կլինեն երկաթից և փայտից,որոնք կկրեն յուրաքանչյուրն իր բնակավայրի անվանումը): | | | | | | օրը ներառյալ |
| 6 | 71241200/6 | **Լոռի Բերդ համայնքի բնակավայրում գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման նախագծային փաստաթղթերի մշակնման աշխատանքներ**<br>Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.<br>Ագարակ բնակավայրում նախատեսվում է կառուցել 18 հատ LED տիպի լուսատուներով գիշերային լուսավորության նոր ցանց, Բովաձոր բնակավայրում՝ 10 LED տիպի լուսատուներով նոր ցանց, Լեջան բնակավայրում՝ 15 հատ LED տիպի լուսատուներով նոր ցանց,Կողես բնակավայրում ՝ կենտրոնական փողոցում ավելացնել ևս 13 LED տիպի լուսատուներ, Սվերդլով բնակավայրում՝ նախատեսվում է գոյություն ունեցող թվով 57 էկոնոմ լամպերից կառուցված ցանցը ավելացնել ևս 17 LED լապերով:Ուռուտ բնակավայրում նախատեսվում է գիշերային լուսավորության ցանցի կառուցում թվով 17 LED լապերով | դր ամ | 510000 | 510000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 7 | 71241200/7 | **Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր տուֆ քարով սալարկման նախագծային փաստաթղթերի մշակնման աշխատանքներ**<br>Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.<br><br>Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի թիվ 7 փողոցի սկզբնամասի,սկսած մայրուղուց մոտ 320գծմ. և 10-րդ փողոցի սկզբից մոտ 230 գծմ հատվածների վերանորոգում: Հիմնանորոգվող | դր ամ | 585000 | 585000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *հատվածների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 550,0 գծմ, լայնությունը 4,0-5,0 մ/կախված գոյություն ունեցող առկա լայնություններից/: Վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 100մմ հաստությամբ ավազե նախապատրաստական շերտի վրայից 180մմ հաստությամբ տուֆ քարից սալարկման միջոցով: Ջրահեռացման կազմակերպման նպատակով թեքությունները կիրականացվի եզրերից դեպի կենտրոն:* | | | | | | |
| 8 | 71241200/8 | **Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր տուֆ քարով սալարկման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ**<br><br>*Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.*<br><br>*Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրի թիվ 4 փողոցի վերանորոգում ամբողջությամբ մոտ 400 գծմ. և 4-րդ փողոցի 1-ին փակուղին մոտ 150 գծմ: Հիմնանորոգվող հատվածների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 550,0 գծմ, լայնությունը 4,0-5,0 մ/կախված գոյություն ունեցող առկա լայնություններից/: Վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 100մմ հաստությամբ ավազե նախապատրաստական շերտի վրայից 180մմ հաստությամբ տուֆ քարից սալարկման միջոցով: Ջրահեռացման կազմակերպման նպատակով թեքությունները կիրականացվի եզրերից դեպի կենտրոն:* | դր ամ | 585000 | 585000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 9 | 71241200/9 | **Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր տուֆ քարով սալարկման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ**<br><br>*Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.*<br><br>*Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի թիվ 2 փողոցի վերանորոգում՝ մոտ 440 գծմ. և 2-րդ փողոցի 1-ին նրբանցքը մոտ 110 գծմ.երկարությամբ: Հիմնանորոգվող հատվածների* | դր ամ | 585000 | 585000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 550,0 գծմ, լայնություն 4,0-5,0 մ./կախված գոյություն ունեցող առկա լայնություններից/: Վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 100մմ հաստությամբ ավազե նախապատրաստական շերտի վրայից 180մմ հաստությամբ տուֆ քարից սալարկման միջոցով: Ջրահեռացման կազմակերպման նպատակով թեքությունները կիրականացվեն եզրերից դեպի կենտրոն: | | | | | | |
| 10 | 71241200/10 | **Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր տուֆ քարով սալարկման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ** Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները. Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի թիվ 1 փողոցի վերանորոգում գյուղի սկզբնամասից մինչև կենտրոնը մոտ 400 գծմ: Հիմնանորոգվող հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 400,0 գծմ, լայնությունը 4,0-5,0 մ./կախված գոյություն ունեցող առկա լայնություններից/: Վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 100մմ հաստությամբ ավազե նախապատրաստական շերտի վրայից 180մմ հաստությամբ տուֆ քարից սալարկման միջոցով: Ջրահեռացման կազմակերպման նպատակով թեքությունները կիրականացվեն եզրերից դեպի կենտրոն: | դրամ | 445000 | 445000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիր ուժի մեջ մտնելու օրվանից 45-ր օրացուցայի օրը ներառյա |
| 11 | 71241200/11 | **Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր տուֆ քարով սալարկման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ** Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները. Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի Սայաթ-Նովա փողոցի մոտ 360 գծմ. և Աշոտ Երկաթ փողոցի 3-րդ նրբանցքի մոտ 240 գծմ.երկարությամբ հատվածների վերանորոգում: Հիմնանորոգվող հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 600,0 գծմ, լայնությունը 4,0-5,0 մ./կախված | դրամ | 445000 | 445000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանա ուժի մ մտնել օրվանից օրացուց օրը ներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գոյություն ունեցող առկա լայնություններից/: Վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 100մմ հաստությամբ ավազե նախապատրաստական շերտի վրայից 180մմ հաստությամբ փուֆ քարից սալարկման միջոցով:Ջրահեռացման կազմակերպման նպատակով թեքություններըկիրականացվեն եզրերից դեպի կենտրոն: | | | | | | |
| 12 | 71241200/12 | **Լոռի Բերդ համայնքի Բովաձոր, Յաղդան և Կողես բնակավայրերի ջրամատակարարման ներքին ցանցի մասնակի նորոգման նախագծային փաստաթղթերի մշակնման աշխատանքներ (ավարտական փուլ)**<br>*Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները*<br><br>*-Պոլիէթիլենե խողովակների տեղադրում d=75 - 600 գծ.մ:*<br>*-Պոլիէթիլենե խողովակների տեղադրում d=50 – 600 գծ.մ:*<br>*-Պոլիէթիլենե խողովակների տեղադրում d=42 – 800 գծ.մ:*<br>*-Սողնակների տեղադրում d=75մմ - 5հատ:*<br>*-Սողնակների տեղադրում d=75մմ - 5հատ:*<br>*-Սողնակների տեղադրում d=42մմ - 5հատ:*<br>*-Պոլիէթիլենե եռաբախշիչների տեղադրում d=75 - 5հատ:*<br>*-Պոլիէթիլենե եռաբախշիչների տեղադրում d=50 - 5հատ:*<br>*- Պոլիէթիլենե եռաբախշիչների տեղադրում d=42 - 5հատ:*<br>*-Դիտահորերի կառուցում ե/բ էլեմենտներից -20 հատ :*<br>*-Ե/Բ դիտահորերի արտաքին նորոգում - 10 հատ:*<br>*-Փականների վերանորոգում- 10 հատ*<br>*-Ջրաչափերի տեղադրում d=16մմ - 20 հատ:*<br>*-500 մ.խ.օրվա կարգավորիչ ջրամբարի վերանորոգում - 1 հատ:* | դրամ | 585000 | 585000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 13 | 71241200/13 | **Լոռի Բերդ համայնքի Լեջան և Սվերդլով բնակավայրերի ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգման և հաշվիչների տեղադրման նախագծային փաստաթղթերի մշակնման աշխատանքներ (ավարտական փուլ)**<br><br>*Իրականացվելու են հետևյալ շինարարական աշխատանքները.* | դրամ | 510000 | 510000 | 1 | գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *Լեջան բնակավայրում նախատեսվում է նորոգել գյուղի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի,8-րդ փողոցի,10-րդ փողոցի և 10-րդ փողոցի 4-րդ փակուղու ջրամատակարարման ներքին ցանցերը,որից կառուցում՝ մոտ 490 գծմ.,ներքաշում մոտ 400 գծմ,տեղադրել մոտ 50 ջրաչափեր հասցնելով ավարտական տեսքի ; Սվերդլով բնակավայրում նախատեսվում է գոյություն ունեցող հինգ ՕՎՋ-ի մուտքերին և մոտ 250 սպառողների համար գոյություն ունեցող դիտահորերում տեղադրել հաշվիչներ:* | | | | | | |

** աշխատանքի.կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**Լոռի Բերդի համայնքապետարան**
**Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5**
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900252000105
ՀՀ 900252114302
ՀՀ 900252000931
ՀՀ 900252114153
Ա. Ներսիսյան
______________
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**ՔՎԷ Նախագիծ» ՍՊԸ**
**ք.Վանաձոր, Վարդանանց 17-5**
**ՀՎՀՀ 06933586**
**<<Ինեկոբանկ>> ՓԲԸ**
**ՀՀ 2051422103891001**
**Է. Քոչարյան**
______________
Կ.Տ